

Վերծանութիւն Մածկագրութեան Մը

Գրիգոր Վրդ. Մազաւտեան

Նիւ Եորքի Pierpont Morgan գրադարանը կը ծրագրէ Միացեալ Նահանգներու պետական, հանրային եւ ակադեմական հաստատութեանց մօտ եւ անհատական հաւաքածոներու մէջ գտնուող հայերէն ընտիր գրչագրերու ցուցահանդէսի մը կազմակերպումը 1994 թուականին: Սոյն գործին իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդարանը:

Այս առիթով՝ անհատական հաւաքածոյէ մը Մորկըն գրադարանի տրամադրութեան տակ դրուած է ձեռագիր աւետարան մը՝ օրինակուած ի Կոստանդնուպոլիս Հայոց ՊՂԶ թուականին: Գրչի անունը հաւանաբար սրբուած է եւ նոտր գրով արձանագրուած՝ հետեւեալ ծածկագրութիւնը.

թ օ ա . զ . ա'

ե օ օ օ : զ օ . ե . թ օ . ե . զ օ օ օ . զ օ օ զ օ օ :

Ձեռագիրը անձամբ չենք տեսած. իսկ վերոյիշեալ մանրամասնութիւնները մեզի հաղորդած է Մորկըն գրադարանի գիտաշխատողներէն Դկտ. Սիլվի Մէրեան: Ձեռագրի նկարագրականը լոյս պիտի տեսնէ 1994ին կայանալիք ցուցահանդէսի ցուցակին [catalogue] մէջ, ուր տեղի սղութեան պատճառով հաւանաբար կարելի պիտի չըլլայ ծածկագրութեան բանալին ներկայացնել, որ կրնայ հետաքրքրել հետազոտողները: Իսկ այդ բանալին չգտանք Ա. Աբրահամեանի «Հայկական ծածկագրութիւն» աշխատասիրութեան մէջ, որ հրատարակուած է Երեւան՝ 1978-ին:

Մածկագրութեան մէջ գրերու յաճախականութիւնը կը թելադրէ հետեւեալ բանալին.

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
աօ	բօ	գօ	դօ	եօ	զօ	էօ	ըօ	թօ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ
աօօ	բօօ	գօօ	դօօ	եօօ	զօօ	էօօ	ըօօ	թօօ
ռ	ւ	վ	տ	ր	ց	ւ	փ	ք
առօօ	բռօօ	գռօօ	դռօօ	երօօ	զռօօ	էռօօ	ըռօօ	թռօօ

Մածկագրութեան վերծանութիւնը հետեւեալն է.

թ օ ա . զ . ա'
 Ղ ա զ ա

ե օ օ օ : զ օ . ե . թ օ . ե . զ օ օ օ . զ օ օ զ օ օ օ :
 ր կ ե ղ ե ց ո յ'